ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍԻ՝

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ

ԴԻԱՆԱ ԷԴՈՒԱՐԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ

Ժ.01.02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված Հռիփսիմե Արայի Զաքարյանի «Ավանդույթի և նորարարության խնդիրները Հենրիկ Էդոյանի պոեզիայում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

20-րդ դարի 60-70-ական թվականների ազգային բանաստեղծական միտքը բանաստեղծական նորահայտ հայտնություններով հայտնվել էր բովանդակային, գեղարվեստական-ոճական, հոգևոր-մշակութային նոր արժեհամակարգ ու սկզբունքներ հաստատելու գործընթացի մեջ: Հայ գրականության պատմության այս շրջափուլը նշանավորվեց Հ. Էդոյանի, Հ. Գրիգորյանի, Ա. Հարությունյանի և այլ երևելի գրողների անուններով:

Հ. Զաքարյանի ատենախոսությունը նվիրված է այդ սերնդի ներկայացուցիչներից մեկի՝ Հ. Էդոյանի բանաստեղծությունների ավանդական ու նորարարական շերտերի քննությանը: Նյութ ունենալով գրողի ողջ ստեղծագործությունը՝ հայ գրականագիտության մեջ առաջին անգամ բազմակողմանիորեն փորձ է արվել առանձին գիտական ուսումնասիրությամբ քննության առնել Հ. Էդոյանի բանաստեղծական աշխարհը:

Ատենախոսությունը հետաքրքրական է արծարծված հարցերով, Հ. Էդոյանի բանաստեղծական աշխարհի էության և յուրահատկությունների մեկնաբանությամբ: Առաջադրված խնդիրներին բազմակողմ հարցադրումներով մոտեցած այս ատենախոսության մեջ հեղինակը, Հ. Էդոյանի բանաստեղծությունները վերլուծելով, գնահատում է ստեղծագործությունները գրականագիտության մեջ ընդունված արդիական մոտեցումներով ու չափանիշներով: Հեղինակի կողմից ուսումնասիրության նպատակների ու խնդիրների օբյեկտիվ գնահատումներն ու

ձևակերպումներն իրականացված են համապատասխան մեթոդների ճշգրիտ ընտրությամբ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, որի մեջ հստակեցվում է առաջադրված նպատակների էությունը, երեք ծավալուն գլուխներից (բաժանված ենթագլուխների), որոնք, ավարտուն և ինքնուրույն ամբողջություն լինելով հանդերձ, փոխադարձաբար կապված են միմյանց, կարելի է ասել՝ մեկը մյուսի տրամաբանական շարունակությունն են, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ատենախոսը Հ. Էդոյանի պոեզիան քննում է պոստմոդեռնիզմի պատմական, փիլիսոփայական և տեսական հիմքերի համապատկերում: Գնահատելի է նաև այն հանգամանքը, որ ատենախոսության հեղինակը Հ. Էդոյանի պոեզիայի դիտարկումներում անդրադառնում է նաև բանաստեղծի տեսական աշխատություններին և իր վերլուծություններն ընդհանրացնում է այդ աշխատություններից ընտրված մեջբերումներով:

1960-70-ական թվականներին ասպարեզ եկած բանաստեղծների հետ մեկտեղ ասպարեզում էր նաև գրականագետ-քննադատների բավականին ակտիվ գործող մի խումբ, որոնք մամուլում տպագրված հոդվածներով երիտասարդ գրողներին մեղադրում էին ազգային արժեքներն անտեսելու, գրական ավանդույթից հեռանալու մեջ: Անդրադառնալով 60-70-ական թթ. պոեզիային առնչվող գրաքննադատական նյութերին, բարեխղճորեն ուսումնասիրելով մամուլում եղած արձագանքները՝ ատենախոսության հեղինակը արդարացի հիմնավորումներով հակադրվում է նախկինում ձևավորված կարծիքներին, որոնք, իրենց հերթին, զարմանալիորեն արդիական են նաև մեր օրերում: Խնդրի առնչությամբ ատենախոսի օբյեկտիվ մոտեցումների հաստատումն այն է, որ «*այս խնդրին ճշգրիտ պատասխան գտնելու համար առավել գիտական խորաթափանց ու իրատեսական մոտեցում էր պահանջվում: Գրական ստեղծագործության համար պահանջվող ընդունված մեթոդաբանությամբ ու գիտական բարեխղճությամբ արված հետազոտությունը ցույց կտար .... որ հենց այդ ներկայում ձևավորվում է նոր ավանդույթ, որը լրջագույն ուսումնասիրության առիթ է հանդիսանալու*» (էջ 20-21):

Հայտնի է, որ պոեզիայի գաղափարական-գեղագիտական հիմքերի վերանայումն ուղեկցվեց գեղարվեստական խոսքի ու բանաստեղծական ձևի զարգացումով՝ հանգավորված բանաստեղծական ձևը փոխարինվեց անհանգ բանաստեղծությամբ՝ վերլիբրով՝ առիթ հանդիսանալով բազում քննադատական տեսակետների: 60-ականների պոեզիայի շուրջ ծավալված բանավիճային հոդվածների առանցքում հենց այս խնդիրն էր դրված: Այս տեսանկյունից, ատենախոսության մեջ ձևավորվում է այն փաստարկված կարծիքը, որ պոեզիայի գաղափարական-գեղագիտական հիմքերի ու բանաստեղծական ձևի վերանայումն ուղեկցվեց բանաստեղծական խոսքի առաջընթացով, և ընդհանրության մեջ ձևավորվեց մի նոր որակ: Ատենախոսության հեղինակը բազմակողմանիորեն քննել է Էդոյանական բանաստեղծական աշխարհի՝ իր կողմից նկատված նրբին ելևէջները, հոգու շարժման ընթացքը, որն էլ, ըստ էության, նրան հանգեցրեց նոր խնդրի լուծման՝ բանաստեղծական խոսքի ու տաղաչափական նոր ձևի յուրահատկությունները նոր մոտեցումներով վերանայելու ու նորովի ներկայացնելու անհրաժեշտության առաջ, ինչը նրան, անշուշտ, լիովին հաջողվել է: Ատենախոսն ընդգծում է, որ Հ. Էդոյանը ավանդական երաժշտական մտածողությունը փոխարինում է նորօրյա մարդու հոգևոր բնույթին բնորոշ խոսքի ազատ-մենախոսական կառուցվածքով: Հենց խոսքի կառուցվածքի ազատությունն է հանգեցնում նաև հանգավորման ազատության:

Գրականագիտական մոտեցումների նոր սկզբունքների հաջորդ էական կետը վերաբերում է բանաստեղության մեջ քաղաքային պատկերների, մարդու և ժամանակակից քաղաքային իրականության փոխառնչության փիլիսոփայական հարցերի նոր մոտեցմամբ վերլուծությանը: Ավանդական ուրբանիզմ եզրույթը փոխարինվում է «քաղաքային տեքստ» եզրույթով, և այս առումով ամբողջովին փոխվում է տեքստի ուսումնասիրության ավանդական ուղղությունը: Այս մեթոդի սկզբնակետը ծայր է առնում Լոտմանի ու Տոպորովի ուսումնասիրություններից: Հենց այս հեղինակների տեսական մոտեցումներն են հիմք ընդունվում թեմայի ուսումնասիրության խնդրում:

Ճիշտ մոտեցումներով ու անցումներով են մատուցվում հատկապես Հ. Էդոյանի յուրահատուկ կառուցվածք ունեցող ժողովածուների առանձնահատկությունները՝

բացելով առանձին շարքերի նորարարական արժեքը, ներկայացնելով բանաստեղծի ստեղծագործական ուղին, զարգացման ճշմարիտ ընթացքը, որը սկզբնավորվում է ժամանակի առաջընթացին համապատասխան գրական մակարդակ ձևավորելու անհրաժեշտության գիտակցումից:

Ուշագրավ դիտարկումներ են արված Հ. Էդոյանի պոեզիայում սոնետի դրսևորման, հանգավորման, կառուցվածքային ու թեմատիկ առանձնահատուկ բնույթի մասին:

Մեր կարծիքով, հարկ է նաև կարևորագույն դիտարկում համարել Հ. Էդոյանի պոեզիայում արքետիպային կերպարների, մոտիվների ու պատկերի հեղինակային իմաստավորումների հիման վրա վեր հանած վերլուծությունների առանձնահատկությունները:

Բանաստեղծության մեջ գործածված մշակութային փորձն իր մեջ կուտակած հնագույն արքետիպային կերպարները, մոտիվներն ու նախապատկերները գրականագիտական տեսանկյունից դարձնելով դիտարկումների օբյեկտ՝ ատենախոսը, հանգամանորեն անդրադառնալով տեքստում վերջիններիս իմաստաստեղծման գործընթացին, վերլուծական կողմնորոշումներով կարողացել է համոզիչ կերպով նշել այն խորքային ու համընդհանուր բնույթ կրող գործառույթները, որոնք էապես դրսևորվում են պատմական ակունքներում ձևավորված մշակույթային շերտերում, և առանձնահատուկ կերպով վերաիմաստավորվում են Հ. Էդոյանի բանաստեղծությունների մեջ՝ ստեղծելով համընդհանուր իմաստային կապ: Խնդրի առնչությամբ հիմք ընդունելով Կ. Յունգի տեսական պատկերացումները՝ ատենախոսի կողմից արքետիպերի գրականագիտական քննություններն ընդգծում են այն համընդհանրացնող աղերսները, որոնք, ձևավորվելով պատմական և մշակութային զարգացման տարբեր մակարդակներում, յուրահատուկ կերպով են դրսևորվում Հ. Էդոյանի բանաստեղծություններում:

Փիլիսոփայական, կրոնական, մշակութաբանական ու գրականագիտական դիտարկումների օգնությամբ բացահայտելով գրական-մշակութային արքետիպերի յուրահատուկ կողմերը՝ ատենախոսության հեղինակը հաջողված փորձ է արել Հ. Էդոյանի պոեզիայում բացահայտելու, հնարավոր միջոցներով ամբողջական ու համակարգված պատկերացում ձևավորելու համընդհանուր և մշակութային

արքետիպային պատկերների, մոտիվների ու կերպարների գեղարվեստական առանձնահատուկ նորարարական դրսևորումների մասին:

Արքետիպերի տեսությանը դիմելու արդյունքում տրամաբանորեն առաջ է մղվում միֆաքննադատության տեսական-մեթոդաբանական հիմքերին դիմելու անհրաժեշտությունը, որի նպատակը ստեղծագործության միֆական հիմքի բացահայտման խնդիրն է: Միֆաքննադատության մեթոդաբանական սկզբունքների միջոցով հետազոտության հեղինակը Հ. Էդոյանի պոեզիայում բացահայտում է արքետիպական ու միֆական տարրերի փոխակերպումների առանձնահատուկ բնույթը, սահմանում նրանց գործառույթները ստեղծագործության բովանդակային կառույցում: Հանգամանորեն վերլուծելով տրամաբանորեն ընտրված բանաստեղծությունները՝ ատենախոսն իրավացիորեն նկատում է, որ Հ. Էդոյանի շատ բանաստեղծությունների սյուժետային ու պատկերային համակարգերի միֆական հիմքերը կապված են քրիստոնեական ավանդույթին:

Ավանդական միֆական պատկերների, սյուժեների, մոտիվների ու կերպարների վերաիմաստավորումները թույլ են տալիս ատենախոսին խոսել Հ. Էդոյանի հեղինակային միֆի մասին, քանի որ, ինչպես նշում է աշխատության հեղինակը, *«բանաստեղծը միֆական պատկերները չի գործածում-մեջբերում ուղղակիորեն, այլ գործածում է համապատասխան իր հայեցակարգային համակարգին՝ ներմուծելով նրա մեջ նոր իմաստներ: .... Վերամշակում է գոյություն ունեցող միֆը, ստեղծում ... նոր «միֆ»»* (էջ 126, 128):

Ատենախոսության հեղինակը, վեր հանելով միֆական պատկերների խորհրդանշական իմաստը, գալիս է այն եզրահանգման, որ Հ. Էդոյանի միֆաբանաստեղծական աշխարհի մոդելը կառուցվում է միֆական քրոնոտոպի ու միֆական հակադրամիասնական բնույթ կրող պատկերների հիմքերի վրա:

Գիտական նորույթի առումով առանձնանում է նաև ատենախոսության երրորդ գլուխը, որը ևս հատկանշվում է գրականագիտական տարբեր արդիական մոտեցումներով:

Աստվածաշնչի գաղափարախոսական իմաստն իր նորովի արտահայտումն է գտել Հ. Էդոյանի բազմաթիվ բանաստեղծություններում: Ատենախոսը հոգեբանական ու փիլիսոփայական հարցադրումների ամբողջության մեջ հետաքրքիր

դիտարկումներով է արժևորում նաև բանաստեղծի քրիստոնեական թեմաներով գրված բանաստեղծությունների առանձնահատկությունները, ընդգծում դրանց ավանդական ու նորարարական կողմերը:

Աշխատանքի հաջորդ մասը՝ որպես առանձին անդրադարձ հեղինակի կյանքի ու մահվան թեմաներով գրված բանաստեղծություններին, նույպես միանգամայն նոր մոտեցում ու թարմ խոսք է: Այստեղ նույնպես առաջին անգամ համեմատական մեթոդաբանությամբ և փիլիսոփայական լայն ու համակողմանի ընդհանրացումներով գրականագիտական վերլուծություններ ու եզրահանգումներ են արված: Առաջադրված հիմնահարցի նպատակն է քրիստոնեական և արևելյան կրոնափիլիսոփայական հայեցակարգերի համապատկերում, համակողմանի մոտեցումներով, համեմատական վերլուծություններով Հ. Էդոյանի պոեզիայում ի հայտ բերել կյանքի ու մահվան խորհրդաբանության բանաստեղծական յուրացումները: Ատենախոսության հեղինակը փիլիսոփայական դիտարկումներով, բանաստեղծական ոճով ու խորքով Հ. Էդոյանի բանաստեղծություններում բացահայտում է կյանքի ու մահվան, իրականի ու անիրականի արտասովոր դրսևորումները, նրանց մեջ հայտնագործում ազգային ու համամարդկային ընդհանրացումներ: Բացահայտվում և նորովի են մեկնաբանվում մեծարժեք բանաստեղծությունների բազում նրբություններ:

Ընդհանրապես տարբեր հեղինակների ստեղծագործությունների հետ տարված գրական զուգահեռներն ու համեմատությունները՝ համեմատական մեթոդի կիրառմամբ, որին հարկ եղած դեպքում դիմել է ատենախոսը, խոսում են աշխատանքի բովանդակային ընդգրկուն ու համակողմանի լինելու մասին:

Ատենախոսության հեղինակը, տեսական հիմնադրույթները կառուցելիս, հենվում է մեծ թվով տեսական փաստերի վրա, սակայն ավելորդ, ծավալուն մեջբերումներով չի ծանրաբեռնում աշխատությունը: Ավելին նշենք՝ ատենախոսական տեքստում օգտագործված ծանրակշիռ նյութերի մանրակրկիտ ուսումնասիրությունները խոսում են ատենախոսի մասնագիտական պատշաճ գիտելիքների և ընտրված թեմայի բազմակողմանի և ամբողջական հետազոտման հարցում անհրաժեշտ հետևողականության կարևորության մասին:

Ատենախոսական աշխատանքում ներկայացված եզրակացությունները լիովին բխում են կատարված հետազոտության հիմնական արդյունքներից:

Հրատարակված 9 հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ատենախոսության բովանդակությունն ու սեղմագրում առաջադրած հիմնադրույթները համապատասխանում են միմյանց:

Ատենախոսության գիտական նորույթն ու կարևորագույն ներդրումն այն է, որ սույն աշխատությամբ հայ գրականագիտության մեջ առաջին անգամ ուսումնասիրության նյութ են դարձել հայտնի և սիրված հայ բանաստեղծ Հ. Էդոյանի պոեզիայի ավանդական ու նորարարական կողմերը:

Հ. Զաքարյանի այս ատենախոսությունն իրապես նոր ու թարմ խոսք է ժամանակակից հայ գրականագիտության մեջ: Ուսումնասիրությունը մենագրական աշխատության արժեք ունի և ըստ այդմ՝ ենթադրում ենք, որ այն լույս կտեսնի առանձին գրքով: Մենագրությունն անթերի տեսնելու հեռանկարով հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ դիտարկումները, որոնք, սակայն, կրում են գործնական նշանակություն և բնավ չեն ստվերում գիտատեսական պատշաճ մակարդակով կատարված ուսումնասիրությունը: Այսպիսով՝

1. Ատենախոսության առանձին հատվածներում կարելի էր խուսափել երկարաշունչ նախադասություններից՝ նախադասությունը տրոհելով վերջակետով (էջ 74, 81)
2. Ճիշտ կիներ, որ գրականության ցանկի նույն ենթաբաժնում ներառված միևնույն հեղինակի տարբեր գրքերն ու հոդվածները մատենաբանության մեջ ընդունված սկզբունքներին համաձայն՝ ըստ ժամանակագրական կարգի հերթականությամբ դասակարգվեին, չնայած նկատելի է, որ հեղինակը հնարավորինս փորձել է հավատարիմ մնալ այդ սկզբունքին, բայց, այնուամենայնիվ, որոշ դեպքերում վրիպել է:
3. Աշխատանքում առկա են տեխնիկական քիչ թվով վրիպակներ (էջ 28, 87, 130):

Հարկ ենք համարում նշել, որ Հ. Զաքարյանի կողմից իրականացված գիտահետազոտական աշխատությունն ունի ատենախոսական աշխատանքի պահանջներին համապատասխանող գիտական կառուցվածք: Շարադրանքը

ձևակերպված է պատշաճ մասնագիտական լեզվով: Այն իր արդիականությամբ բնորոշվող, համապատասխան հետազոտական մեթոդների գրագետ գործածումով ու պահանջված ծավալով գրված ավարտուն գիտական աշխատություն է:

Ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի՝ «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ Հռիփսիմե Արայի Զաքարյանն արժանի է հայցվող՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Բանասիրական գիտությունների թեկնածու՝
Դիանա Էդուարդի Մնացականյան
18.04.2022 թ

«Հայաստանում Եվրոպական քոլեջ հիմնադրամի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու՝ Դ. Մնացականյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ»՝
«Հայաստանում Եվրոպական քոլեջ» հիմնադրամի տնօրեն՝
Ս. Հակոբյան